ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2022 թվականի N 1147 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի N 332-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 22-ի «Երևան քաղաքի 33-րդ թաղամասի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» N 332-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետը 2023 թվականի հունվարի 1-ն է, բացառությամբ սույն որոշման N 1 հավելվածի 14-րդ կետի 2-րդ ենթակետի 2-րդ պարբերությունում նշված տարածքի, որի սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետը 2023 թվականի սեպտեմբերի 1-ն է.».

2) որոշման N 1 հավելվածի 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

3) ուժը կորցրած ճանաչել որոշման N 15 հավելվածը.

4) որոշումը լրացնել նոր՝ N 15.1 հավելվածով՝ համաձայն N 2 հավելվածի.

5) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում «15» թիվը փոխարինել «15.1» թվով:

2. Լիազորել Երևանի քաղաքապետին սույն որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող յոթ օրվա ընթացքում որոշումը պատշաճ ձևով ուղարկել սույն որոշման N 1 հավելվածի 14-րդ կետի 2-րդ ենթակետի 2-րդ սյունակում ընդգրկված օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում ունեցող գույքային իրավունքներ ունեցող անձանց:

3. Լիազորել Երևանի քաղաքապետին Հայաստանի Հանրապետության անունից «Բաբերդ Քոնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ու «Տարսոն Քոնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել «Բաբերդ Քոնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ու «Տարսոն Քոնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և Հայաստանի Հանրապետության միջև 2018 թվականի մարտի 19-ին կնքված պայմանագրում սույն որոշումից բխող փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան

28.07.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ